



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
 ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate



Թի 1943  
 Դեկտեմբեր 21, 1994

Արժանաշնորհ  
 Տ. Մամբրէ Ա. Քհնյ. Գուգուեան  
 Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
 Գէլմպրիճ.

Սիրելի Տէր Մամբրէ,

Ձեր գաւակին՝ Ալեքսան Սրկ. Գուգուեանի Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած քահանայական ձեռնադրութիւնը ունեցաւ յաջող, կանոնաւոր եւ լաւ կազմակերպուած ընթացք, որուն համար ձեզի կը փոխանցենք մեր շնորհակալութիւնն ու գնահատանքը:

Ուրախ ենք որ քառասունքի շրջանի աւարտին՝ նորընծայ Տ. Վազգէն Քհնյ. Գուգուեան իր անդրանիկ պատարագը մատուցած է Եկեղեցւոյ մէջ, եւ որպէս Հովիւի օգնական իր օժանդակութիւնը կը բերէ համայնքային աշխատանքերու՝ ձեր հսկողութեան ներքեւ:

Յուսալով որ որոշ փորձառութեան տիրացած ըլլալով՝ Տէր Հայրը պատրաստ է լման ժամանակով հովուական պաշտօն ստանձնելու, զինք նշանակեցինք Սփրինկֆիլտի Ս. Մարկոս Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ 1995 Ապրիլ 5-էն սկսեալ:

Այս մասին մենք տեղեկացուցած ենք Տէր Վազգէնի եւ Ս. Մարկոս Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդին:

Կ'աղօթենք որ Տէրը Ս. Հոգիով գորացնէ նորընծայ Տէր Վազգէնը եւ յաջողութեամբ պսակէ անոր նոր առաքելութիւնը:

Ձեզի եւ ձեր հարազատներուն կը մաղթենք առաւել քաջաոողջ, երկար ու արդիւնաւոր տարիներ:

Սիրոյ ողջունի

*Խաչապետ Արք. Գրաւան*

ԽԱՇԱԿ ԱՐԶ. ՊԱՐՍԱՄԵԱՆ  
 Առաջնորդ